

**ՀՈՒՆԱԿԱՆ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ՀԱՅ-ՀՈՒՆԱԿԱՆ
ՀԱՐԱՐԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱՆՈՒՄ (1918-1920 թթ.)**

Հ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԳԱԱ ակադեմիկոս

Այս խորագիրն է կրում 1998թ. Երևանում հայերեն լեզվով հրատարակված փաստաթղթերի ժողովածուն, որը հունարեն բնագրից թարգմանել, ծանոթագրել և հեղինակային առաջաբանով տպագրության է պատրաստել Հայաստանի Հանրապետության Ազգային ակադեմիայի ակադեմիկոս, Աթենքի և Հռոմի ակադեմիաների անդամ, վաստակաշատ և ճանաչված հայագետ-բյուզանդագետ Հրաչ Բարթիկյանը:

Ժողովածուն պարունակում է երկու փաստաթուղթ. առաջինը 1919թ. օգոստոսի 5-ից մինչև 1920թ. հունվարի 10-ը Կովկասում Հունաստանի դիվանագիտական առաքելության ղեկավար Ի.Մտավրիդակիսի 1919թ. նոյեմբերի 15 (18)-ի՝ Հունաստանի արտաքին գործերի նախարար Ն.Պոլիտիսին Թիֆլիսից հղած զեկուցագիրն է՝ «Տեսակետ Հունաստանի՝ Կովկասում և Հայաստանում տարվելիք քաղաքականության մասին»: Այս փաստաթղթի բնագիրը առաջին անգամ Աթենքում 1986թ. հրատարակել է ճանաչված պատմաբան և քաղաքական գործիչ Յաննիս Խատետիսը՝ որպես հավելված «Երկուստեք պատրանքներ. հույն-հայկական համագործակցությունը Փոքր Ասիայում և Կովկասում (1917-1922թթ.)» հոդվածի:

Երկրորդ փաստաթուղթը հունական բանակի հրետանու գնդապետ Դիմիտրոս Կաթեոնիտիսի 1920թ. հունիսի 3-ի զեկուցագիրն է Պոնտոսի վերաբերյալ իր գործողությունների մասին: 26 փաստաթուղթ ընդգրկող զեկուցագիրը ուղարկվել է Հունաստանի վարչապետ Էլենֆերիոս Վենիզելոսին, արտաքին գործերի նախարար Ն.Պոլիտիսին, զինվորական նախարարության շտաբին, Թուրքիայում գործող հունական էքսպեդիցիոն կորպուսի հրամանատարին: Փաստաթղթերը հայերեն լեզվով հրապարակվում են առաջին անգամ:

Ժողովածուում հրապարակված փաստաթղթերը ընդգրկում են 1919թ. մայիսի 14-ից մինչև 1920թ. հունիսի 3-ը ընկած ժամանակաշրջանը: Մինչ այդ ստեղծվել և միջազգային հարաբերություններում ռազմաքաղաքական դիվանագիտական սկզբնական քայլերն էր անում Հայաստանի Առաջին հանրապետությունը, Մուղոսում 1918թ. հոկտեմբերի 30-ին կնքված զինադադարից Թուրքիայի զավթած շրջաններում օսմանյան լուծը թոթափվելու, հունական հողերը վերադարձնելու, Պոնտոսում հունական ինքնավարություն ստեղծելու ուղղությամբ ջանքեր էր գործադրում 1909թ. իշխանության գլուխ անցած վարչապետ Վենիզելոսի գլխավորած կառավարությունը: 1912-1913 թվականների Բալկանյան պատերազմների հետևանքով Հունաստանին արդեն վերադարձվել էին Էգեյան Մակեդոնիան՝ Մալոնիկով, Թրակիան, Էպիրոսը, Կրետեն: Հերթը Չմյուտնիայինն էր (Իզմիր), որը 1917թ. հունիսի 29-ին Անտանտի կողմից Առաջին համաշխարհային պատերազմի մեջ մտած Հունաստանին խոստացել էր Անգլիան:

Թուրքիայի հարցում նոր մոտեցումներ էին առաջացել: 1918թ. հոկտեմբերի 14-ին հրապարակվեց ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի «14 կետերը

պաշտոնական մեկնաբանություններում»։ Նոր ձևակերպում էր ստացել 12-րդ հոդվածը։ Մեկնաբանություններում ասված է. «Կովկասը հավանաբար պետք է դիտել որպես թուրքական կայսրության հիմնահարցի մաս։ Անաստուխան պետք է թողնել Թուրքիային»։ Նախագահ Վիլսոնի «14 կետերը» դարձել էին կռվան համաթրքության գաղափարախոսների և թուրքական իշխանությունների հետագա գործողությունների, Թուրքիայի «փնքնիշխանության իրավունքի» կիրառման համար։ «Վիլսոնը ճանաչում է դրանով մեր տարածքների ամբողջականությունը և չի ճանաչում օտարների անհիմն պահանջները՝ այս նույն երկրի նկատմամբ։ Վիլսոնի ծրագրի 12-րդ հոդվածը մեկընդմիջ տեղում է։ Անգլիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի պահանջները, որոնք իրենց մեջ արդեն բաժանել էին Անատոլիան»։

Ինչպես հայերի, այնպես էլ հույների ազգային շահերը պահանջում էին ընդհանուր դարավոր թշնամու դեմ ուժերի համախմբում, համախոհ ելույթ ու գործողություններ։ Համակցված ջանքերի արտահայտման ասպարեզ բացվեց Փարիզում 1919թ. հունվարից սկսված հաշտության վեհաժողովի աշխատանքով, որտեղ իրենց պահանջներն էին ներկայացրել Հայաստանի և Հունաստանի կառավարությունները։ Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը Ավետիս Ահարոնյանի գլխավորությամբ Փարիզ էր ժամանել ունենալով կառավարության 1918թ. դեկտեմբերի 7-ին ընդունած հրահանգը, որի հիմնական դրույթներից էին. 1. Նախկին ռուսահայ և տաճկահայ մահաճգներից կազմվելու է մեկ պետական մարմին՝ Միացյալ Հայաստան, 2. Հայաստանի մեջ մտնելու են Անդրկովկասից՝ Հանրապետության բոլոր հողամասերը՝ ծրագրված վերաբաժանման սահմաններում, Տաճկահայաստանից՝ հայկական վեց վիլայեթները, առանց ոչ հայաբնակ ծայրագավառների, բայց սեփական ելքով ծով։ Ինչպես վկայում է Փարիզի “Les Temps” լրագիրը (1919թ. հունվարի 6) Հունաստանի խորհրդարանը իր համերաշխությունն էր հայտնել հայկական պետականության վերականգնման համար պայքարին, վստահեցնելով, որ Փարիզի հաշտության վեհաժողովում հունական կառավարությունը կպահանջի հայ ժողովրդի արդարացի պահանջների ճանաչումը և իրականացումը։ Խորհրդարանի մոտեցումները պաշտպանել էր Հունաստանի Ալեքսանդր թագավորը՝ Հայոց ազգային պատվիրակության մախագահ Պողոս Նուբար փաշային Փարիզ հղած հեռագրում։ Այսպիսով Հունաստանը դարձել էր առաջին եվրոպական պետությունը, որը ճանաչել էր Հայաստանի Հանրապետությունը։ 1919թ. փետրվարի 3 և 4-ին հունական հարցի քննարկման ժամանակ Վենիզելոսը հայտարարել էր, որ Հայաստանը իր մեջ պետք է ներառնի Արևելյան Հայաստանը, Կիլիկիան, բացի հայկական վեց վիլայեթներից՝ մաև Տրապիզոնը, դեպի ծով ելք ունենալու համար, թեև վերջինիս բնակչության ճնշող մասը հույներ էին. նրանք սկսել էին շարժում Պոնտոսի անկախության համար։ Հայաստանի առաջարկները, որոնք 1919թ. փետրվարի 12-ին Ա.Ահարոնյանի և Պողոս Նուբարի ստորագրությամբ նրկայացվեցին Փարիզի վեհաժողովում, պարունակում էին մաև Տրապիզոնի՝ հայկական պետության մեջ ներառնելու խնդիրը։ Այս մասին տեղեկացնելով Կոստանդնուպոլսի Ջավեն պատրիարքին՝ Պողոս Նուբար փաշան հայտնում էր. Սև ծովի ելքի խնդիրը «Վենիզելոսի հետ միաժամանակ որոշեցինք պահանջել հաշտություն կոնֆերանսից։ Ահաբռնյալը հայտարարեց, որ Հայկական Հանրապետությունը ևս ընդունում է միևնույն ծրագիրը. կարելի կլինե՞ր միացնել Կովկասյան Հայաստանը Կիլիկիայի վեց կուսակալությունների և Տրապիզոնի կառավարության մի մասի հետ, և այս միացումը թույլ է տալիս մեզ կազմել մեծ և ամբողջական Հայաստան»։

1919թ. փետրվարի 25-ին համատեղ հայտարարությամբ հանդես էին

եկել Կոստանդնուպոլսի հայ և հույն պատրիարքները: Առաջ էր քաշվել հայ-պոնտական կոնֆեդերացիայի ստեղծման հարցը, որին իր համաձայնությամբ էր տվել նաև Վենիզելոսը: Պատրիարքները դնում էին հայերի՝ ծով դուրս գալու իրավունքի հարցը՝ Ադանայի վրայով: Հայերը պետք է պաշտպանեին հույների առաջարկները՝ Թրակիայի, Կոստանդնուպոլսի, Նիկոմեդիայի սանջակի, Բուրսայի, Ադանայի, Տրապիզոնի կուսակալության հարցում: Դրվում էր հայերի և հույների հայրենադարձության խնդիրը:

Հայ-հունական հարաբերությունների և Պոնտոսի կարգավիճակի հարցը դարձավ լայն քննարկման առարկա հայկական և հունական քաղաքական-ազգային շրջանակներում: Հայաստանը առաջինը ճանաչեց Պոնտոսի ինքնավարության իրավունքը:

1919թ. փետրվարի 24-ից ապրիլի 22-ը Փարիզում հրավիրված արևմտահայերի համագումարը որոշեց դիմել հաշտության վեհաժողովին Հայաստանի սահմանների մեջ առնել նաև Տրապիզոնի կուսակալության արևելյան մասը՝ մինչև Իրիսի գետաբերանը: Նման որոշման համար էին հանդիսացել՝ 1) 1914թ. հունվարի 26-ին Կոստանդնուպոլսում ստորագրված հայկական վերափոխումների ծրագիրը, որտեղ մեծ տերությունների կողմից բացի վեց կուսակալություններից, Հայաստանի մեջ մտցվել էր նաև Տրապիզոնը՝ իբրև բնական ելք ծով դուրս գալու համար, 2) Հունաստանի կառավարության ղեկավար Է. Վենիզելոսի հայտարարությունը, որ իր պետությունը չի պահանջի Տրապիզոնի կուսակալությունը և «ջերմորեն կփափագի, որ այդ երկրամասը մնա Հայաստանի Հանրապետությանը», 3) Հայաստանի Հանրապետությունը, դառնալով անկախ պետություն, իբրև ցամաքային երկիր՝ նավահանգստի անհրաժեշտության կարիք ունի:

Արևմտահայերի համագումարի, հայկական պատվիրակությունների և Վենիզելոսի մասն մոտեցումը առաջ բերեց Պոնտոսի գաղթական հույների դժգոհությունը: Մարտեաբնակ հույն վաճառական Կոստանդինեսի՝ նախագահությամբ ստեղծված հանձնաժողովը բողոքեց հայերի «տիրապետական» ձգտումների դեմ: Նրանք հայտարարեցին, որ «Պոնտոսի հույները չեն ուզում բուրքական լուծը փոխարինել հայկական լծով» և պայառաստ են գնքով պաշտպանել իրենց ինքնավարությունը՝ մ.թ.ա. 302-ից 64 թվականը գոյություն ունեցած Պոնտոսի թագավորության շրջաններում՝ Պոնտական Կապադովկիայի մերձսևծովյան շրջաններում՝ Սինոպ, Ամասիս, Տրապիզոն՝ որտեղ դարերի ընթացքում գաղթել և բնակություն էին հաստատել հույները:

Պոնտական հույն համայնքի ներկայացուցիչների հետ բանակցություններ վարելու և առաջարկություններ ներկայացնելու համար Փարիզի արևմտահայ համագումարը ընտրեց պատվիրակություն՝ Արմեն Գարո (Բաստրմաջյան), Արշակ Չոպանյան, սյրոֆ. Աբրահամ Տեր-Հակոբյան, սյրոֆ. Արտաշես Խաչատրյան, Ավետիս Թերզիբաշյան: Հայ և հույն պատվիրակությունների բանակցությունների արդյունքում առաջարկվեցին հետևյալ բանաձևերը.

1. Պոնտոսը ձգտում է դառնալ անկախ հանրապետություն, այդ դեպքում Հայաստանը ազատ ելք կստանա Սև ծովի վրա Ռիզա և Աթենա նավահանգիստներում: Հայերը այդ անկախությանը արգելք չեն հանդիսանա:

2. Պոնտոսը կարող է կապվել Հայաստանի հետ կոնֆեդերացիոն քաղաքական կառուցվածքով՝ մասն Ավստրո-Հունգարիայի միությանը:

3. Պոնտոսը կմիանա Հայաստանին դաշնակցային կառուցվածքով՝ մասն Շվեյցարիային:

4. Պոնտոսի մեծ մասը՝ մինչև Իրիսի գետաբերանը, ուղղակի կմիանա

Հայաստանին, որպես նրա մեկ նահանգը՝ ունենալով ներքին քաղաքական անկախություն:

Երրորդ կետը համընկնում էր Ռուսաստանի ժամանակավոր կառավարության՝ Թուրքահայաստանի մասին 1917թ. ապրիլի 26-ի որոշմանը, որով ռուսական զորքի գրաված Արևմտյան Հայաստանի գլխավոր կոմիսարիատը բաժանվում էր չորս շրջանների՝ Վանի, Մուշի, Էրզրումի, Պոնտոսի:

Հայ-հունական հարաբերությունների զարգացման և Պոնտոսի հարցի առաջացման հենց սկզբնական փուլում դրսևորվեցին Հունաստանի կառավարության հակումները՝ ընդառաջ գնալ պոնտոսցիների դիմումներին և թողնել, որ Պոնտոսի հարցը, որը առաջ էր եկել Հայկական հարցի հետ միաժամանակ, ընթանա Հայկական հարցից անջատ, միաժամանակ պոնտական հույներին տրամադրել լայն օժանդակություն, մասնավորապես ստեղծել ռազմական կազմակերպություններ՝ վաշտեր, զնդեր և այլ միավորումներ, նախապատրաստել թուրքական իշխանությունների դեմ զինված ելույթների՝ հանուն Պոնտոսի անկախության: Ձորաջուկատները պետք է ստեղծվեին Ռուսաստանի հարավում, Կովկասում, Հունաստանում: Այդ գործին պետք է նպաստեին Կոստանդնուպոլսի, Փարիզի, Մարսելի, Թիֆլիսի, Բաթումի պոնտոսցիների կոմիտեները: Անկախություն քարոզող պոնտոսցի հույները միաժամանակ խոսում էին հայերի կողմից հույների «կլանման» վտանգի մասին: Այդ հարցը քննարկվում էր հունական բարձր շրջաններում, անձամբ զբաղվում էր վարչապետը:

Պոնտոսի վերաբերյալ հարցերի համակարգիչ 1919թ. ապրիլի 25-ին նշանակվեց հրետանու գնդապետ Դիմիտրոս Կաթենիոտիսը, որը դաշնակիցների բանակի շտաբում ֆրանսիական զեներալ Ֆրանսուա դ'Էսպերեի մոտ արդեն ստանձնել էր հունական զինվորական առաքելության ղեկավարի պաշտոնը:

Վարչապետ Վենիզելոսին և արտաքին գործերի նախարար Դիոմիդիսին 1919թ. մայիսի 14-ի Կոստանդնուպոլսից հղած առաջին իսկ ինքնագրում Կաթենիոտիսը հայտնում էր Հայաստանի կողմից Պոնտոսի կլանման վերաբերյալ վարկածների անհիմն լինելու, Հայաստանի կազմում նրա զարգացման անվտանգության ապահովման երաշխիքների մասին:

Այս փուլում հայ-հունական հարաբերությունների բացահայտման համար կարևոր նյութեր են պարունակում Ա.Ահարոնյանի զեկուցագիրը մամակները: Մայիսի 19-ին, գրում էր Ահարոնյանը, Վենիզելոսին հաջողվել էր համոզել «նախ Լլոյդ Ջորջին, ապա մյուսներին, որ իրավունք տան հույն բանակին քայլել թուրք մացիոնալիստների, ուրեմն՝ քեմալիստների դեմ, և մինչև այսօր հույները հաջողությամբ առաջ են գնում, և ըստ երևույթին Անգլիան նրանց միջոցով վճռել է ճնշել քեմալիստների շարժումը և իրագործել տալ դաշնագիրը (Մոսկովի-Հ.Ա.): Չմյուռնիան և Թրակիան Վենիզելոսը նոր պատերազմով ամրապնդել է, սպասելի է, որ այս պայմաններում քեմալիստները կամսաց-կամաց ոտքի տակ հողը կկորցնեն»:

1919թ. օգոստոսի 6-ին Ահարոնյանը Խառիսյանին տեղեկացնում է նաև հայ-հունական հարաբերություններին Վենիզելոսի մտեցումների մասին: «Այս առավոտ, գրում է Ահարոնյանը, զեներալ Կորգանյանի ընկերակցությամբ տեսնվեցի նաև Վենիզելոսի հետ, պատմեցի հայերի ծանր դրությունը Կովկասում և պարզեցի մեր և իրենց շահերի ընդհանրությունը ընդդեմ թուրքական շարժումների և խնդրեցի ցույց տալ մեզ հնարավոր օգնության զենքով և այլ մթերքներով և երբ հնար է՝ Մալմիկից: Մասնավորապես խնդրեցի մեզ հատկացնել տասն հազար լեբերի հրացաններ: Ինչպես միշտ Վենիզելոսը շատ սիրալիր ելավ և խոստացավ անմիջապես հեռագրել Մալմիկ, երբ հնար է այնտեղից մեզ պետք եղած

օգնությունը հասցնելու»։ Ծանուցելով հույն ինքնության հնարավորին չափ լիարժեք փրկությունն ապահովելու, ազգի շահերի ընդհանրությունը ներդաշնակելու համար, ամեն զոհողությունների գնալու պոնտացիների սխալաստականության մասին՝ Կաթենիոտիսը հայտնում էր և Կոստանդնուպոլսի պոնտացիների կոմիտեի համաձայնության մասին. «Փարիզի հաշտության վեհաժողովում Պոնտոսը Թուրքիայից անջատելու մասին ամեն մի որոշում, ինչ գնով էլ, որ այն լինի, թեկուզ որոշ պայմաններով Հայաստանի կազմը մտնելու, իրենից ներկայացնում է հարցի միակ փրկարար լուծումը»։

Կովկասում և Հայաստանում 1919թ. օգոստոսի 5-ից իր աշխատանքները ծավալեց Հայաստանի դիվանագիտական առաքելության ղեկավար Դ. Ստավրիդակիսը։ Թիֆլիսում Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության դիվանագիտական առաքելության ղեկավարների հետ 1919թ. սեպտեմբեր-հոկտեմբերին ունեցած մի քանի հանդիպումների ժամանակ Ստավրիդակիսը հիմնականում դնում էր երկու հարց. հույներով բնակեցված մի քանի գյուղերի ազգաբնակչության՝ Հունաստան գաղթելու տրամադրվածության (միայն Կարսի մարզում բնակվում էր մոտ 29 հազար հույն) հարցը և հունական զինվորական հատուկ զորամասի կազմակերպումը։

Ստավրիդակիսը գտնում էր, որ հույների գաղթը Կարսի մահանգից կթուլացնի հայերին, և հակառակը, կուժեղացնի մուսուլմանական տարրը, այդ իսկ պատճառով նա ջանում էր, որ հույները մնան իրենց տեղերում, դրա համար նա ակնկալում էր Հայաստանի կառավարության աջակցությունը։ Ըստ Ստավրիդակիսի, աջակցությունը պետք է դրսևորվեր հույն ժողովրդի ինքնապաշտպանության գործին նպաստելու մեջ, որը կարող էր տեղի ունենալ առանձին շրջաններում ու բնակավայրերում հույների՝ բանակ զորակոչումը դադարեցնելով։ 1919թ. հոկտեմբերի 4-ին Վրաստանում Հայաստանի դիվանագիտական առաքելությանը հղած հեռագրում Ստավրիդակիսը հայտնում էր, որ հույներին իրենց բնակատեղերում պահելու նպատակով Կովկասում հունական առաքելությունը կազմակերպում է մթերքների և հագուստեղենի առաքում և այդ բանում «ունի Հայաստանի կառավարության աջակցության հույս, քանզի հույները միշտ եղել են հայերի դաշնակիցները»։ «Հունական առաքելության պետի ասելով, գրում էր 1919թ. հոկտեմբերի 12-ին Հայաստանի արտաքին գործերի նախարարին Վրաստանում Հայաստանի դիվանագիտական առաքելության ղեկավար Միք. Թումանյանը, – և Վրաստանում, և կամավորական բանակում հարուցվել է հույների զինակոչի խնդիրը, սակայն հունական կառավարությունը բողոքել է դրա դեմ, որովհետև հույները ռուսական խնդիրներում իրենց համարում են չեզոք»։ Ստավրիդակիսը խնդրում էր Հայաստանի կառավարության համաձայնությունը, որպեսզի Հայաստանում ինքնապաշտպանության նպատակով կազմակերպվեն հունական հատուկ զորամասեր՝ Հայկական հրամանատարության հսկողության տակ։

Ստավրիդակիսի տեսակետը ավելի ամփոփ և հստակ արտահայտված է գրախոսվող ժողովածուում հրատարակված նրա՝ 1919թ. նոյեմբերի 15/28-ի Հունաստանի արտաքին գործերի նախարարին ուղղված զեկուցագրում։ Որպես հունական ռազմական ուժերի կազմակերպման վայր նկատի առնելով Հայաստանը՝ հունական դիվանագիտական առաքելության ղեկավարը գտնում էր, որ այն «կունենա բարոյապես և իրապես հաջողություն»։

Այդ նպատակների իրականացման գործում Հայաստանի առավելությունները Ռուսաստանի, Վրաստանի, Ադրբեջանի (վերջինս լրիվ բացառում էր) նկատմամբ Ստավրիդակիսը համարում էր.

ա) միևնույն ճակատում ընդհանուր թշնամու առկայություն,
բ) աշխարհագրական դիրք, որտեղ միանում է Փոքր Ասիան Կովկասի հետ,
գ) կոմպակտ հույն բնակչություն, որը կարող է ծառայել որպես ատաղձ,
դ) հայկական կառավարության հետ հունական գործադիրությունների
կազմակերպման մասին բանակցությունների հաջող ավարտը,
ե) մեծ կազմակերպության ստեղծման հիմնավոր պատճառաբանու-
թյունը՝ քրդերի և թուրքերի կողմից հույն ազգաբնակչության ջարդի ենթա-
կելու մշտական վտանգը:

Այս ընդհանրացումները Ստամբուլի վստահորեն անում էր՝ նկատի ունենալով և՛ հայկական կողմի, մասնավորապես, վարչապետ Խաթիսյանի 1919թ. նոյեմբերի 11-ի հավաստումը, և՛ Տրապիզոնի հունական մետրոպոլիտ Խրիսանթոսի հաղորդումները:

Հաշտության վեհաժողովի աշխատանքի մոտ մեկ տարվա փորձը դրսևորեց Համաձայնության երկրների մոտ մոտեցումները Թուրքիայի հալած-ված քրիստոնյա ազգերի ազատագրման և Օսմանյան կայսրության պահ-պանման նկատմամբ: Պոնտոսի անկախության ձգտումը անցավ անկա-րելիության կարգը, որի հետևանքով Հունաստանի քաղաքագետները արդեն ստիպված էին հայտնել Հայաստանի հետ միանալու մասին: 1919թ. դեկտեմ-բերի վերջերին պատվիրակություն ուղարկվեց Երևան՝ Փարիզում սկսված բա-նակցությունները շարունակելու համար:

Իրադրությունը պահանջում էր հայ-հունական հարաբերությունների կոնկրետացում, ընդհանուր թշնամու դեմ ուժերի համախմբում, համերաշխ գործողություններ: Երևան ժամանած Հունաստանի դիվանագիտական առա-քելության ղեկավար Ստամբուլի վստահորեն և Տրապիզոնի հույն մետրոպոլիտ Քրի-սանթոսը Հայաստանի կառավարության կողմից ընդունվեցին «իրենց դիրքին ու աստիճանին պատշաճ»: Հունվարի 2-ին կայացավ խորհրդակցություն Հայաստանի կառավարության վարչապետի և Տրապիզոնի մետրոպոլիտի միջև՝ «Պոնտոսի քաղաքական ձևավորման մասին»:

1. Պոնտական պետությունը, որը ընդգրկում է ծովեզերքից՝ Սինոպից մինչև Ռուսաստանի հին սահմանը, իսկ դեպի ցամաքը՝ Հյուսիսից Պարսար լեռների ջրաբաշխից մինչև Վահուկ լեռնաշարը և Գալլ գետի (Գեղ գետ) ձախ կողմի ջրաբաշխը՝ մինչև Ամասիա-Սինոպ, միանում է Հայաստանին դաշնակ-ցային պայմանով՝ մեծ Շվեյցարիայի, այսինքն, պետք է ունենան՝ ա) դաշ-նակցային միացյալ խորհրդարան, բ) արտաքին քաղաքականություն, գ) ել և մտից (ֆինանսական) դրության, դ) դրամական դրության, ե) մաքսային դրության, զ) բանակ, է) հաղորդակցության միջոցներ՝ թղթատար, հեռագիր, երկաթուղի, նավագնացություն, ը) տեղական ներքին գործերի մեջ լիակատար ինքնավարություն:

Այդ միությունը իրագործելու նպատակով կողմերը որոշեցին.

1. Փարիզում աշխատում են միացյալ ուժերով:

2. Եթե հաշտության վեհաժողովը չպսակի հայերի և հույների հույսերը, հարկ եղած դեպքում զինված դուրս գալ երկու ժողովուրդների քաղաքական ազատությունը ձեռք բերելու համար:

3. Բանակցել հունական կառավարության հետ՝ Հայաստան ուղարկելու իր ներկայացուցիչը և ընդունել Հայաստանին՝ Արևելքում: Երևան ուղարկել Հունաստանի զինվորական ներկայացուցիչ՝ խորհրդակցելու համար Հայաս-տանի զինվորական նախարարության հետ հարկ եղած դեպքում ձեռք առնե-լիք միջոցառումների մասին:

Աթենք ուղարկված զեկուցագրում բերվում են Հայաստանի վարչապետին Քրիստոսի առաջարկի պայմանները:

1) Պոնտոսը, որն ընդգրկում է Տրապիզոնի վիլայեթը, Մամսոնի կազան, Ամասիայի կազան և Սինոպի կազան, Հայաստանի հետ կազմում է մի կոնֆեդերացիա, որի անունն է Պոնտոս-Հայկական կոնֆեդերացիա:

2) Կոնֆեդերացիայի կազմում գտնվող այդ երկրներից յուրաքանչյուրը պահպանում է իր լիակատար ինքնավարությունը, սեփական խորհրդարանը, սեփական օրենսդրությունը՝ տարածքային հատուկ նախարարություններով, ինչպես նաև իր կանոնավոր բանակը:

3) Բանակի միասնությունը ապահովված է միացյալ հրամանատարությամբ և ռազմական մեկ նախարարությամբ՝ թե պատերազմի և թե խաղաղության ժամանակ:

4) Բացի այդ, կլինի միասնական ազգային քաղաքականություն, դրամական, փոստի և հեռագրական կապի, ինչպես նաև հաղորդակցության ճանապարհների միասնական համակարգ:

5) Երկու երկրների ad hoc (առ այս) բարձրագույն հանձնաժողովին կհանձնարարվի կարգավորելու կոնֆեդերացիայի կազմում եղած երկու երկրների ընդհանուր հարցերը:

6) Փարիզի խաղաղության կոնֆերանսում հայկական և հունական պատվիրակությունները երկու կողմերի պահանջների իրականացման համար կնախաձեռեն միասնական քայլեր:

Ստավրիդակիսի և մետրոպոլիտ Քրիստոսի՝ Թիֆլիսում և Երևանում վարած բանակցությունների արդյունքներին վերաբերող վավերագրերը վկայում են հայ-հունական հարաբերությունները նոր փուլ թևակոխելու, համատեղ որոշումներ ընդունելու, հարաբերությունները գործնական հողի վրա տեղափոխելու մասին:

Վենիզելոսը 1919թ. նոյեմբերի վերջերին գնդապետ Կաթենիոտիսին հանձնարարեց մեկնել Բաթում և Թիֆլիս՝ նոր իրադրության պայմաններում գործողության տակտիկա մշակելու, առաջարկություններ ներկայացնելու համար: Գնդապետը Բաթում հասավ դեկտեմբերի 25-ին, Թիֆլիս՝ հունվարի 10-ին: Մինչև Կովկաս մեկնելը նա մի շարք հանդիպումներ էր ունեցել արտաքին գործերի նախարար Պոլիտիսի, Աթենքում Անգլիայի դեսպանի, Կոստանդնուպոլսում հունական գլխավոր կոմիսար Կանելուպուլոսի, Տրապիզոնի մետրոպոլիտ Քրիստոսի, Արևելքում ամերիկյան զինվորական առաքելության ղեկավար գեներալ-մայոր Ջեյմս Հարբորդի և այլ գործիչների հետ:

Կաթենիոտիսի՝ 3 օրով Թիֆլիս ժամանելու մասին նույն օրը՝ 1920թ. հունվարի 10-ին տեղեկացվեց վարչապետ Խատիսյանը: Հունվարի 12-ին Խատիսյանը և Հայաստանի խորհրդարանի ռազմական հարցերի գծով կոմիտեի նախագահ Ռուբեն Տեր-Սինասյանը ժամանեցին Թիֆլիս: Մինչ այդ, Խատիսյանը Թիֆլիս՝ Քրիստոսին ուղարկել էր հունական կողմի առաջադրած հարցերի պատասխանը: 1) Պոնտոսը մտնում է Հայկական Հանրապետության կազմը, որպես ֆեդերատիվ միավոր, բանակի, դրամի, փոստի և հեռագրական կապի, ծովային և ցամաքային ճանապարհների միասնությամբ, միևնույն արտաքին քաղաքականությամբ, մեկ խորհրդարանով, նրան թողնելով իր ներքին գործերը ազատ տնօրինելու սեփական մարմինները:

Մի կողմից Ա. Խատիսյանի և Ռ. Տեր-Սինասյանի, մյուս կողմից Քրիստոսի և Կաթենիոտիսի հետ երկկողմանի համագործակցության տարբերակները քննարկվեցին Թիֆլիսում, հունվարի 12-ին: Հույն ներկայացուցիչներ

րին չէին բավարարում հայ պատվիրակների պնդումները ֆեդերատիվ կառուցվածքի մասին: Նրանք շարունակում էին զարգացնել «Պոնտոս-Հայաստան» կոնֆեդերացիայի ստեղծման գաղափարը:

Բանակցությունների ժամանակ Կաթենիոտիսը առաջ քաշեց այն միտքը, որ կազմավորվող բանակը չպետք է լինի խառը, այլ ազգային, և Պոնտոսի առկա փոքրաթիվ ռազմական ուժը և Հունաստանի կողմից նրա հնարավոր գորացումը չպիտի օգտագործվի ուղղակիորեն Պոնտոսը սպասարկելու համար: Հայաստանի համար նա պետք է լինի որպես օժանդակ ուժ:

Հունվարի 16-ին Խառիսյանը ներկայացրեց կառավարության և խորհրդարանի հավանությանն արժանացած նոր տարբերակը: Հայաստանի հետ ֆեդերատիվ միություն կազմող Պոնտոսը իր ներքին գործերում վայելում է լիակատար ինքնավարություն, ունի իր տեղական խորհրդարանը, Հայաստանի Հանրապետության հետ միասնական բանակ՝ մեկ գլխավոր հրամանատարով, միասնական ռազմական մախարարություն, դրամական համակարգ, արտաքին քաղաքականություն, փոստ, հեռագրական կապ, ծովային և ցամաքային հաղորդակցության ճանապարհներ, ինչպես նաև ընդհանուր պետական ֆինանսներ և Հայաստանում Պոնտոսի ընդհանուր հարցերի համար մեկ խորհրդարան:

Նույն օրը՝ հունվարի 16-ին Վենիզելոսին և խաղաղության վեհաժողովին մասնակցող Հայաստանի և Պոնտոսի պատվիրակություններին Խառիսյանը և Զրիսանթոսը համատեղ հղած մամուլում խնդրում էին ահազանգել քաղաքակիրթ Եվրոպային և աղերսել, որ ձեռնարկվեն (գոնե այս անգամ) կանխարգելիչ միջոցներ, որպեսզի հետո հարկ չլինի «ուղբալու թուրքերի կատարած նոր բռնությունների ու ջարդերի առթիվ», խնդրել մանդատառու կողմերին հնարավորին չափ շատ դաշնակցային զորքեր ուղարկել՝ օգնելու համար Պոնտոսի հույներին, «որոնք հայերի հետ համաձայնության են եկել, որ ափ ելած զորքերը կառաջանան դեպի Երզնկա և Էրզրում՝ դիմակայելու թուրքական կանոնավոր զորքերին»: Հունաստանի կառավարությունից խնդրվում էր անհապաղ մոբիլիզացնել ուժեր՝ հայկական բանակը համալրելու համար, ինչպես նաև առաքել ռազմամթերք:

Պողոս Նուբար փաշային 1920թ. հունվարի 12 (25)-ին գրած մամուլում Մարսելի պոնտոսցիների խորհրդի մախագահ Կոստանդինեդիսը, ողջունելով Թիֆլիսում կնքված համաձայնագիրը, հայ և հույն ժողովուրդների պարտքն էր համարում արտասահմանում «ներշնչվել ազնվորեն իրար պաշտպանելու ձգտումով»՝ թիֆլիսյան համաձայնագիրը դիտելով որպես Արևելքում հաստատված «համագործակցության քաղաքականության մի երջանիկ (մախատիպ)»: Մեծ ծովում ելք ունենալու Հայաստանի ձգտումը հույն ազգային ու հասարակական գործիչը համարում էր «միանգամայն օրինական երևույթ»: Նա գտնում էր, որ խաղաղ հարաբերությունների ապահովման միակ արդար լուծումը «կլինեք ծովափնյա ժողովուրդների ազատ ու ինքնաբերական ֆեդերացիայի կազմումը հայ ժողովրդի հետ»՝ Թիֆլիսում ստորագրված սկզբունքներին համաձայն: «Երեկ խաղաղության վեհաժողովին ներկայացրեցի մի ծրագիր, որտեղ ցույց եմ տվել Պոնտոսի հարցը և նրա ժողովրդի անունից խնդրել եմ երկրի ֆեդերատիվ միացումը Հայաստանի հետ, Թիֆլիսում արդեն կայացած համաձայնության հիման վրա: Մակայն Հայաստանին ոչ թե միացնել Պոնտոսի տարածքի միայն մեկ բեկորը, այլ գոնե հույների բնակեցված բոլոր տարածքները, որոնք աշխարհագրական ու տնտեսական մի ամբողջություն են կազմում Հայկական մահանգների հետ: Մենք ողջունում ենք Հայաստանի ազատագրումը թուրքական լծից»:

Թիֆլիսի համաձայնագրով դնելով «ազատ և ինքնավար ֆեդերացիայի» և ռազմական համագործակցության հիմքը, կնքելով նաև ռազմական համագործակցություն՝ Հայաստանի վարչապետ Ա. Խատիսյանը և հույն գնդապետ Կաթենիոտիսը հունվարի 17-ի մամուլում խնդրում էին Հունաստանի վարչապետ Վենիզելոսի «գորեղ աջակցությունը Հայաստանի անկախության ամրապնդման ու ճանաչման» դաշնակցային ուժեր, այդ թվում և հունական զորքի՝ Հայաստան ուղարկելու գործում:

Հայ-պոնտական և ընդհանրապես հայ-հունական հարաբերությունների ամրապնդման հարցում գնդապետ Կաթենիոտիսը եռանդուն գործունեություն ծավալեց Բաթումում, Կոստանդնուպոլսում, Աթենքում, Փարիզում, Լոնդոնում՝ թիֆլիսյան համաձայնությունից հետո, 1920 թ. հունվար-մայիս ամիսներին:

Երբ միջազգային իրադարձությունների զարգացման ընթացքով և մեծ տերությունների քաղաքականության փոփոխական բնույթով «մարեց ազատ Պոնտոսի ստեղծման վերջին հույսը», հազարավոր հույներ լքեցին Պոնտոսը՝ մասնավորապես Տրապիզոնը, և «խնդրի ամեն մի լուծում բացառվեց»: Չքացավ՝ և Հայաստանի կողմից Պոնտոսի կլանման երկյուղը: «Գուցե շրջանից հեռու գտնվելով ես տատանվեի, քանի որ ես էլ էի վարակված հույների՝ հայերի կողմից կլանվելու երկյուղով, բայց այն բանից հետո, երբ ես տեսա, թե վերջիններս ինչպիսի վիճակում են գտնվում, ապա և նրանց կողմից ֆեդերատիվ վարչակարգի ընդհանուր գծերով ընդունելը, համոզվեցի, որ պոնտոսցիները ոչ թե Հայաստանի հպատակները պետք է դառնային, այլ նրա պաշտպանները», - գրում է Կաթենիոտիսը: Հետաքրքիր էր և դաշնակիցների անգործությունը: Ամենաշահագրգիռ տերությունը՝ Անգլիան, բացի Wardrop-ի անձնական գործողություններից, իր տրամադրության տակ ոչինչ չուներ»: Գնդապետը ի հակակշիռ անգլիական անձան զինուժի, մատնանշում է, որ Կրաստանում և Ադրբեջանում վխտում էին բազում թուրք սպաներ, Խորհրդային Ռուսաստանի հետ կապ ապահովող բոլշևիկյան տարրեր: Ուժեղանում էր Խորհրդային Ռուսաստանի ազդեցությունը հարավում:

Իր մտորումների մասին գնդապետ Կաթենիոտիսը հունվարի 21-ին հայտնեց Փարիզի հունական դեսպանություն՝ Վենիզելոսին, խաղաղության կոնֆերանսում Պոնտոսի հույների ներկայացուցիչներ Կոստանդինեղիսին և Իկոնոմոսին՝ Հայկական հարցի քննարկման մախօրյակին դիրքորոշում մշակելու նկատառումով: Արձանագրելով հայերի հետ Փարիզում տարածքային հարցերի քննարկումները՝ Թիֆլիսում Հայաստանի ներկայացուցիչների հետ շոշափված բանակցությունների կարևորությունը, Պոնտոսի նկատմամբ Հայաստանի ունեցած գերադաս դիրքը, ազատ տարածքի առկայությունը, Կաթենիոտիսը գրում էր. «Բոլորը գիտակցում են, որ պոնտոսական ազատ և ինքնավար մի անկյան ստեղծումը, որը հայերը ճանաչելու են և որը վայելելու է ազատ պետության (Հունաստանի) լիակատար հովանավորությունը, իրենից ներկայացնում է մի ցանկալի կայան՝ ցիրուցան եղած հույներին Պոնտոսում համախմբելու համար»:

Հրատարակված փաստաթղթերից պարզվում է, որ Լոնդոնում գնդապետ Կաթենիոտիսը Վենիզելոսից իմացել էր նաև Հայաստանի հարցում մեծ տերությունների մոտ մոտեցումների, զինադադարից անմիջապես հետո դաշնակիցների խոստացած Մեծ Հայաստանի փոխարեն՝ սեղմ սահմաններում Հայաստան ստեղծելու մասին: Վենիզելոսը, այնուհանդերձ, համձնարարել էր շարունակել գործել «քանի դեռ ոչինչ վերջնական չէ, և բացառված չէ կոնֆերանսի կարծիքի փոփոխումը»: Պոնտոսի հույների տարրեր կոմիտեներում

առաջացավ Անգլիայի կամ Հունաստանի հովանավորությամբ անկախ Պոնտոս ստեղծելու միտումը: Միաժամանակ պահպանվում էր ամբողջական ու անբաժանելի Պոնտոսը Հայաստանի հետ ֆեդերալ միություն կազմելու գաղափարը: Կոստանդնուպոլսի հունական կոմիտեի ղեկավար Կանելոպոլոսը 1920 թ. փետրվարի 21-ին հայտնում էր վարչապետ Վենիզելոսին. «Պոնտոսի հայերը նախընտրում են ֆեդերալ միություն Հայաստանի հետ, բայց այն պայմանով, որ պետությունը ընդգրկի ոչ միայն Տրապիզոնը, այլև ամբողջ Պոնտոսը, որը մնալու է անբաժանելի»: «Անբաժանելին», ահա մոլեռանդության նոր առանցքը, որը փոխարինեց մյուս դավաճանքին՝ «Արմենոֆոբիային»,՝ գրում է գնդապետ Կաթենիոտիսը: Պոնտոսի ներկայացուցիչները պահանջում էին 56 հազար քվե, այսինքն՝ այնքան, որքան Պելոպոնեսը, Կենտրոնական Հունաստանը, Թեսալիան միասին՝ Ռիզեից մինչև Սինոպ՝ ափամերձ շրջանում կազմելով 520 կմ՝ ուղիղ գծով: Թիֆլիսի համաձայնագրով պահանջվում էր 14 հազար քվե Ռիզեից մինչև Պրիպոլիս: Չհարելով նման մտածողներին, Կաթենիոտիսը այդ համարում էր «քեթևամտություն, որով գործի է դրվում անբաժանելի մասին հասկացողությունը»:

Հետաքրքիր նյութեր են պարունակում հայոց ազգային պատվիրակության ղեկավար Պողոս Նուբար փաշայի, Հայաստանի պատվիրակության նախագահ Ավետիս Ահարոնյանի, գեներալ Գաբրիել Կորգանյանի և Հունաստանի ներկայացուցիչ Ռոմանոսի՝ հունական կոմիտեների ղեկավարների հետ 1920 թ. փետրվար-մարտ ամիսների լոնդոնյան հանդիպումների մասին գնդապետ Կաթենիոտիսի զեկուցագրերը: Ժողովածուում գետեղված փաստաթղթերից հստակ երևում է հայկական երկու պատվիրակությունների՝ շատ հարցերում, մասնավորապես հայ-պոնտոսյան ֆեդերացիայի հարցում անջատ գործելու փաստը: 1920 թ. փետրվարի 17-ին Կաթենիոտիսը Լոնդոնից հայտնում էր Աթենք՝ արտաքին գործերի նախարարությանը. «Նուբար փաշան, որին հանդիպեցի կոնֆերանսում, իր ներկայանալու նախորդ օրվա երեկոյան, ինչպես ինձ թվաց, և դա թերևս իրոք այդպես էր, անտեղյակ էր Թիֆլիսի բանակցություններին: Նա զարմացավ, երբ նրան ցույց տվեցի (համաձայնության) տեքստը: Նա ինձ բացատրեց, որ ես այնքան էլ տարօրինակ չհամարեմ իր անտեղյակությունը, քանզի կոմիտեում *ինքը համարվում է ամենայն հայոց ներկայացուցիչ*, երբ Երևանի կառավարության գլխավոր ներկայացուցիչը պարոն Ահարոնյանն է: Նա ինձ ջերմորեն խնդրեց չանսամ այն Ահարոնյանին տեսնել, քանի որ նա Տրապիզոնի կառավարման վերաբերյալ արդեն ձևավորված կարծիք ունի, որը հանգում է այն մտքին, որ մի քաղաք չի կարող դառնալ ֆեդերատիվ պետություն, այլ շատ-շատ՝ ազատ քաղաք»: Այս տխուր փաստը երկու պատվիրակությունների անջատ-անջատ, ոչ համախոհ գործելու, ոչ ընդհանուր ծրագրով հանդես գալու բազմաթիվ փաստերից է, որը հաջողությամբ օգտագործվում էր հակառակորդ ուժերի, իրենց իմպերիալիստական ներքին հակասություններն ունեցող մեծ պետությունների կողմից, որը և վերջին հաշվով հասցրեց դիվանագիտական անհաջողությունների: Հայ-հունական հարաբերությունների հարցում իրենց դերը խաղացին և Պոնտոսի հարցում հույների մեջ առաջացած տարբեր մոտեցումները:

Ստավրիդակիսի զեկուցագրի՝ Հ.Բարթիկյանի թարգմանությունը նպաստում է հետազոտողներին, որոնք ծանոթ են Հ.Ուլունյանի գրախոսականում բերված մեջբերումներին, ճիշտ հասկանալ փաստաթղթի իմաստը, խոսափել Ուլունյանի սխալներից, որոնք երբեմն աղավաղում են տեքստը: Նշենք մի քանիսը.

1. Для Греции наступил очень выгодный момент, когда “Восток весь бурлит, Россия разделена и дезорганизована, единственная важная военная сила в данном районе — это Греция; необходимо занять всю Малую Азию в клещи”.

2. “Понтийский вопрос” рассматривался греческим дипломатом как “Дальнейшее развитие” греческой политики”.

3. “Предлагалось образовать в Тифлисе греческий банк с отделениями в Баку, Батуме и Трапезунде. Этот банк должен был выпустить для Кавказа греческие бумажные деньги”, чем “помог бы греческой торговле и государству и уменьшил бы затраты Греции в этом районе”.

4. “Греческий представитель рекомендовал правительству Греции в обмен на использование железной дороги Грузии оказать ей некоторую помощь”.

5. Цель пропагандистской кампании, которую должна была развернуть агентура Греции, по мнению Греческого эmissара, заключалась бы в том, чтобы “противостоять итальянской, мусульманской и большевистской деятельности”.

«Հունաստանին տրված է եզակի առիթ այն պահին, երբ Արևելքը անտեր է մնացել, Ռուսաստանը բաժան-բաժան ու կազմալուծված է և այս տարածության նշանակալից զինվորական ուժերը հունականն են՝ Փոքր Ասիան քեկուզ կարճ ժամանակով կառնվի հզոր արցանի մեջ»:

«Պոնտոսի հարցը, թեև հենց սկզբից, բայց հատկապես այս պահին, կարող է հսկայական նշանակություն ունենալ, ոչ որպես այդպիսին, այլ որպես արտաքին քաղաքականության նոր ուղղություն»:

«Աշխատավարձի, տեղական շուկայի և այլ կարիքների համար անհրաժեշտ դրամական միջոցները պետք է տրամադրվեն հունական բանկի կողմից, որը պետք է հիմնադրվի Թիֆլիսում՝ իր բաժանմունքներով Կարսում, Բաթումում և Տրապիզոնում»:

Այդ բանկը Կովկասի շուկա մտցնելով հունական քրթադրամ, հունական առևտրին և պետությանը մեծ օգնություն պիտի հայթայթի և պիտի նվազեցնի գործի ամբողջական ծախսերը»:

«Հույս ունեն ավելի ուշ պիտի կարողանանք բանակցել վրացական կառավարության հետ, բավական է նրան խոստանալ քաղաքական փոխհատուցումներ և առևտրական դյուրություններ»:

Հունաստանից լուրեր չունենալով, մուսուլմանների և նրանց հարողների անվերջ զրպարտչական արշավանքներին ի վիճակի չենք հակահարված տալ:

Ինչու մարդիկ Հունաստանի քաղաքական կացության, հունական կյանքի և ազգային գործունեության մասին պետք է տեղե-

6. “Если вооруженные силы будут большими - достаточно дивизии полного комплектования - все Закавказье будет в греческих руках и вопрос будет простой”.

Պատմության դասերն ուսանելի են: Հայաստանի Հանրապետության երկու և կես տարվա գոյության ընթացքում դրվեցին Հունաստանի Հանրապետության հետ ռազմաքաղաքական հարաբերությունների հիմքերը. նշանակվեցին դեսպաններ, հյուպատոսներ, ռազմաճակատներում աչքի ընկած 50 հայ քաջորդիներ արժանացան Հունաստանի Հանրապետության բարձր զինվորական պարգևների: Թափ առնող համագործակցությունը ընդհատվեց Առաջին հանրապետության անկումով: Այն նոր մակարդակի բարձրացավ 1991 թվականից՝ Հայաստանի անկախության հռչակումից հետո:

Հայ-հունական հարաբերությունների վերաբերյալ Հունաստանի արխիվներում պահպանվող վավերագրերի ժողովածուն հայերի և հույների՝ երկու դարավոր բարեկամ ժողովուրդների ազգային շահերը, իդժերն ու մղումները արտահայտող փաստի վկայությունն է՝ նրանց անխզելիության ապացույցը: Այդ բարեկամությունը ավելի վաղ արտահայտվել է երկու ժողովուրդների համար բախտորոշ փուլերում: Դարերի ընթացքում հաստատված բարեկամության օրինաչափությունների արդյունավետության, պատմական դասերի ընդհանրացումը նպաստում է արդի քաղաքական բարդ պայմաններում ճիշտ կողմնորոշմանը և փորձի կիրառմանը:

ГРЕЧЕСКИЕ АРХИВНЫЕ ДОКУМЕНТЫ ОБ АРМЯНО-ГРЕЧЕСКИХ ОТНОШЕНИЯХ В ПЕРИОД ПЕРВОЙ РЕСПУБЛИКИ (1918–1920 гг.)

Г.Г.АВETИСЯН (академик НАН РА)¹

Резюме

Раскрываются армяно-греческие отношения в период Первой республики Армения по греческим архивным материалам, в частности: по докладным запискам руководителя дипломатической миссии Греции на Кавказе И.Ставридакиса и полковника греческой армии Катеонидиса. Документы с греческого переведены и изданы академиком Г.Бартикяном.

Լրաբեր 1-3

կանան իտալական մամուլի այստեղի ծառայության բյուլետեններից կամ էլ մուսուլմանական, բուլղարական և այլ գործակալություններից (հեռագրական-Հ.Ա.):

Մենք հունական ազգի դեմ ուղղված ծայրահեղ զրպարտությունների դիմաց գտնվում ենք պասսիվ դիտորդների դերում: Ջրպարտությունների, որոնց պատճառով հնարավոր չի լինում մեր հայրենակիցների ազդեցության տարածումը:

«Եթե զինվորական ուժը մեծ լինի, այսինքն ավելի քան մեկ դիվիզիա, ողջ Անդրկովկասը հունական ձեռքում կլինի և նրա գործունեությունը՝ դյուրին»: